# ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՔԱՌԱՍՈՒՆՄԵԿԵՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐԸ

## ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՐԳՈ ՊԱՐՈՆ Ա Ռ Ո Ւ Շ Ա Ն Յ Ա Ն Ի Ն

Ե Ր Ե Վ Ա Ն

Սովետական Հայաստանի 41-րդ տարեդարձի առիթով հանեցեք ընդունել, Պարոն Նախագահ, Մեր սրտագին շնորհավորանքները և ամենաջերմ բարեմաղթությունները:

Աղոթող ենք Մայր Հայրենիքի ծաղկման, մեր ժողովրդի երջանիկ կյանքի, Սովետական Միության անսասանության և ամբողջ աշխարհի խաղաղության համար:

Հարգանոք և օրհնությամբ՝

**Վ Ա Զ Գ Ե Ն Ա**

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

28 նոյեմբերի 1961 թ.
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

---

## ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՐԳՈ ՊԱՐՈՆ Ք Ո Չ Ի Ն Յ Ա Ն Ի Ն

Ե Ր Ե Վ Ա Ն

Հանեցեք ընդունել Մեր ջերմագին շնորհավորանքները Սովետական Հայաստանի 41-րդ տարեդարձի առիթով:

Մաղթում ենք, որ մեր վերածնված Հայրենիքը առավել ծաղկի ու զորանա Սովետական ժողովուրդների եղբայրական ընտանիքում՝ ընդհանուր խաղաղության և բարօրության պայմաններում: Հաջողություն և արևշատություն Ձեզ և մեր բարեխնամ կառավարության բոլոր անդամներին:

Սիրով և օրհնությամբ՝

**Վ Ա Զ Գ Ե Ն Ա**

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

28 նոյեմբերի 1961 թ.
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

---

## ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՐԳՈ ՊԱՐՈՆ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Հայաստանում սովետական կարգերի հաստատման 41-րդ տարեդարձի առիթով հանեցեք ընդունել Մեր ջերմագին շնորհավորանքները և լավագույն բարեմաղթությունները:

Աղոթում ենք առ Աստված մեր ժողովրդի բարօրության և խաղաղ, ստեղծագործ աշխատանքի մեջ նորանոր նվաճումների համար:

Ողջունիվ և օրհնությամբ՝

**ՎԱԶԳԵՆ Ա**

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

28 նոյեմբերի 1961 թ.
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Հայաստանում սովետական կարգեր հաստատելու 41-րդ տարեդարձի առթիվ հղած Ձեր ջերմ շնորհավորանքների և բարեմաղթությունների համար Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության և անձամբ իմ անունից շնորհակալություն եմ հայտնում:

**Շ. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ**

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

29 նոյեմբերի 1961 թ.
ԵՐԵՎԱՆ

---

Հայաստանի կառավարության և անձամբ իմ անունից շնորհակալություն եմ հայտնում Հայաստանում սովետական կարգեր հաստատելու տարեդարձի առթիվ Ձեր ջերմագին շնորհավորանքների համար:

**Ա. ՔՈՉԻՆՅԱՆ**

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ

29 նոյեմբերի 1961 թ.
ԵՐԵՎԱՆ

---

Շնորհակալությամբ և գոհունակությամբ ստացանք Հայաստանում սովետական կարգերի հաստատման 41-րդ տարեդարձի առթիվ Ձեր շնորհավորական հեռագիրը:

**Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ**

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

29 նոյեմբերի 1961 թ.
ԵՐԵՎԱՆ